

Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«ԵԼՆ Ի ՎԻՐԱՊԷՆ» ՏՈՆԻՆ

(21 հունիսի 2003 թ.)

*«Նովիս քաջ բանաստղի հոսրի Տեր Ս. Գրիգոր, հասարակեցրեց
գիտնունս Եկեղեցոյ ի Նայասարան երկրի ի վերայ հիմնան
սուրբ առաքելոց... հասարակեա զանձինս մեր հասարով
ճշմարտութեան ի վերայ հիմնան Ս. Եկեղեցոյ»:*
(Շարական)

*«Բանավոր հոսրի քաջ հովիվ Տեր Ս. Գրիգոր, որ Նայասարան
աշխարհում Եկեղեցու հիմքերը հասարակեցիր առաքելական
ավանդության վրա, այսօր մեր անձերը հասարակիր
ճշմարտության հավարով Ս. Եկեղեցու հիմքերի վրա»:*

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ. ամէն»:

Ահավասիկ, սիրելիներ, սրբազան շարականագիրը այսպես է բնորոշում մեր հավապո հորը, ում ձոնվել են բազմաթիվ սրեղծագործություններ և բարեխոսական աղոթքներ, ում անվանել են արդարության և սրբության անոթ, ուր խորացված է ճգնության առաքինությունը, խոստովանող, բազմաչարչար և բազմերախար հովվապետ, երկնային գործի հետ բնակվող, մարտիրոսների պարծանք, առաքյալների լրում, մարմնավոր հրեշտակ երկրի վրա և այլն:

Սուրբ Գրքի առաջին իսկ էջերից փեսնում ենք Տիրոջ բարի հայեցողությունը հանդեպ այս հողի, ուր սրեղծվեց առաջին մարդը, ուր իջավ փրկության փապանը Նոյի, որսերից գոհաբանական առաջին աղոթքը բարձրացվեց, և դարձյալ այս ազգն էր, որ Քրիստոս չրեսավ, բայց հավարաց և Տիրոջն ընդունելու ցանկություն հայտնեց՝ Արգար թագավորի անձով, արժանացավ Տիրոջ առաքյալներից Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի օրհնությանը, ովքեր էլ առաջինը սերմանեցին բանական Լույսի ճշմարիտ գիտությունը, և ի վերջո՝ մեր ազգն էր, որ արժանացավ հոգևոր մի առաջնորդի, ով հանուն իր ժողովրդի նախ 13 փարիներ Վիրասյի խորը գուրի մեջ մաքրագործվեց և հետո կարողացավ Աստուծո հայացքը վերստին դարձնել մեր ազգի վրա:

Այս շաբաթը, սիրելիներ, մեզ համար ուսանելի խորհուրդներով լի շաբաթ է, քանզի մեզ հայտնվում է սուրբ և անմեղ կույսերի մարտիրոսությունը՝ հանուն Երկնավոր Փեսայի, որոնց արյան հետ միախառնվեցին Լուսավորիչ մեր Ս. Նոր աղոթքի արցունքները, շնորհիվ որոնց և Աստուծո Միածին Որդին իջավ այստեղ և Կենդանի Աստուծո օրհնությունն սրացան Կաթողիկե կառուցելու, մի Եկեղեցի, որ 1700 փարիներ շարունակ ի մի է հավաքել հա-

յոց մեր բազմաչարչար ժողովրդին և ապագայի բարի լավապետությամբ առաջնորդել դեպի Արքայության Միոռ հավիտենություն:

Ուզում եմ այսօր ձեր ուշադրությունը հրավիրել մի շար կարևոր հանգամանքի վրա՝ մեր նահապետի և խոստովանող սուրբերի քաջության և հավատքի հանդեպ անսասանության վրա: Նայեք, թե՛ Ղեկիսիմյանք և թե՛ Ս. Գրիգոր Լուսավորիչը երբեք ու երբեք չուրացան և իրենց հավատքից նշանախնց իսկ չզիջեցին, անգամ ամենակարող Տրդատ արքայի առջև: Չարչարվեցին, ենթարկվեցին աննկարագրելի և անմարածելի կտրանքների, անգամ թունավոր օձերի և կարիճների խայթոցները կրեցին, սակայն երբեք Քրիստոսին չուրացան, երբեք չշեղվեցին Քրիստոսահիմն և առաքելավանդ հավատքից, և սրա արդյունքն էր Տիրոջ ողորմությունն ու հայրնությունն այս ազգին:

Այսօր, եկեք այսօր փեսենք՝ ո՛ր էինք և ո՛ր հասանք, ի՞նչ ունենք և ի՞նչ ենք կորցնում, ո՛րն է պարճառը, որպե՛ն՜դ փնտրենք. յուրաքանչյուրս մեր մեջ, մեր անձերում: Մենք ենք պարճառը մերօրյա ամեն մի պատուհասի, որ պարահում է մեր ազգին:

Եկեք՝ միասին նայենք, թե ո՛ր ժողովուրդը, ո՛ր երկիրը և ո՛ր ազգն է, որ արժանացել է Տիրոջ Միածին Որդու այցելությանը, ո՛ր ազգի հովիվն է, որ նախ փարիներ շարունակ ճգնել և սրբագործվել է, հետո ճշմարտության լույսը սփռել և առաջնորդել «ժողովրդեանն ի վայրի դալարոջ եւ առ ջուրս հանգստեան», և մանավանդ այդ ո՛ր ժողովուրդն է, որ Միածնակերպ և Քրիստոսահասարպ Նայրապետական Աթոռ ունի և Աստվածահիմն Մայր Տաճար, որ գուրգուրող և սիրող Մայրն է ամենայն Եկեղեցյացս մերոց, մի քարեղեն շինվածք, որի հոգեղինացման 1700-ամյակն ենք փոռում, մի Կաթողիկե, որ դարերի ընթացքում միշտ իր անսասանությամբ և հպարտ հայացքով, իր մշտազեղ գորության հորդումով շարունակ պահել, պահպանել ու պայծառ գալիքի հույսն է ներշնչել հայ մարդուն:

Այսօր, երբ ի մի խմբված, կանգնած ենք Իջման այս Ս. Մեղանի առջև, եկեք՝ ուխտենք, որ այս հնաբույր Խորանի 1700-ամյա հոբելյանի նախաշեմին կանգնած, մեր Ս. Նոր չարչարանքը, աղոթքի յուրաքանչյուր կաթիլ արցունքը միջնորդ և բարեխոս ունենալով, մեր մեջ կվերակենդանացնենք այն ճշմարտության կյանքը, որ իր հետ Խոր Վիրապից վեր հանեց Ս. Գրիգոր և սփռեց Նայոց աշխարհում՝ մաքրելով ու սրբելով ամեն կեղծիքից ու խաբեությունից: Ուխտենք, որ հավաքարհիմ կմնանք մեր Արարչին և Տիրոջը և կիրաժարվենք կռապաշտությունից ու նյութապաշտությունից, հավաքարհիմ կմնանք մեր ազգին, մեր հողին, մեր ավանդությանը՝ հեռու վանելով օտարամտության ախարը և անարարբերության մոլությունը, որպեսզի մեր հոր արժանավոր գավակները լինենք:

Թող Ամենակարողն Աստված միշտ պայծառ ու օրհնաբեր պահի Նայոց 1700-ամյա Նայրապետությունն իր Սրբություն Սրբոց Միածնաեջ այս Տաճարով, բարգավաճ դարձնի մեր հայրենին, պողաբեր՝ մեր հողը, և առավել գորացած ու անսասան իր հավատքի մեջ՝ մեր փառապալա ժողովրդին:

Տիրոջ շնորհքի ու իմաստության մեջ ապրենք այժմ և հավիտյանս, ամեն: